ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Օրգանիքս ՍՊԸ-ն ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/14 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Minnuo	Minnuo	Minnuo	Jiangsu Minnuo Group	Ազոտի բարձր ճնշման լիցքավորման կայանք 1. Ընդհանուր դրույթներ 1.1. Կայանը նախատեսված է մթնոլորտային օդից բարձր մաքրության ազոտի գեներացման համար՝ ճնշման տատանողական ադսորբցիայի (PSA) տեխնոլոգիայի կիրառմամբ՝ ածխածնային մոլեկուլային մաղով որպես ադսորբենտ: 1.2. Ազոտի առանձնացումը իրականացվում է թթվածնի և ազոտի դիֆերենցիալ ադսորբցիայի և դիֆուզիայի արագությունների հաշվին՝ շրջակա միջավայրին մոտ ջերմաստիճանում:

						1.3. Կայանը մատակարարվում է որպես ամբողջական, գործարանային պայմաններում հավաքված մեկ միավոր՝ մոնտաժված մետաղական շրջանակի վրա։ 1.4. Տեղադրումից և էլեկտրասնուցման միացումից հետո կայանը պատրաստ է շահագործման։ 1.5. Մատակարարումից հետո որևէ կառուցվածքային փոփոխություն կամ լրացուցիչ մոնտաժ չի թույլատրվում, քանի որ սարքավորումը նախատեսված է մինչև 200 բար աշխատանքային ճնշման համար և դասակարգվում է որպես բարձր վտանգավոր սարքավորում։ 2. Գործառնական պահանջներ 2.1. Կայանը ապահովում է՝ • ազոտի մաքրություն՝ ≥99.999%, • արտադրողականություն՝ ≥50 լ/րոպե, • ելքային ճնշում՝ ≥200 բար (կարգավորվող), • մեկնարկի ժամանակ՝ ≤30 րոպե, • լիովին ավտոմատացված աշխատանք։ 2.2. Կայանը ունի կրկնակի ադսորբցիոն աշտարակներ, որոնք աշխատում են հերթափոխ՝ մեկը ադսորբցիայի,

					մյուսը՝ վերականգնման ռեժիմում։ 2.3. Կառավարումը իրականացվում է PLC համակարգով՝ պնևմատիկ փականների ավտոմատ կառավարմամբ։ 3. Համակարգի կազմը և մանրամասն նկարագրությունը։ Կայանը ներառում է՝ 1. Պտուտակային օդային կոմպրեսոր (≥7.5 կՎտ, ≥66 մ³/ժ, ≥8 բար, 380 Վ) 2. Օդի չորացուցիչ (8–12 բար, 0–4°C ցողի կետ) 3. 5-փուլային ֆիլտրացիոն համակարգ 4. Օդային բաք՝ ≥300 լ, մինչև 10 բար 5. PSA ազոտի գեներատոր (≥50 լ/րոպե, ≥99.999%, 220 Վ) 6. Ազոտի բաք (≥300 լ, մինչև 10 բար) 7. Ազոտի միջին ճնշման ուժեղացուցիչ (ելք՝ 15 բար) 8. Միջին ճնշման ազոտի բաք (մինչև 16 բար) 9. Ազոտի բարձր ճնշման ուժեղացուցիչ (ելք՝ ≥200 բար, 380 Վ) 10. Բարձր ճնշման լիցքավորման կոլեկտոր (մինչև 200 բար, 5 բալոն) 11. Բարձր ճնշման 50 լիտրանոց գազաբալոններ (մինչև 200 բար) 3.1. Պտուտակային օդային կոմպրեսոր։ Եռաֆազ (380 Վ) օդային կոմպրեսոր՝ ոչ պակաս, քան 7.5 կՎտ հզորությամբ և 66 մ3/ժ

					օդային ելքային հզորությամբ: Ելքի ճնշումը ոչ պակաս, քան 8 բար է: Կոմպրեսորի աղմուկի մակարդակը 60 դԲ, որն ունի կոմպակտ չափսեր՝ 900x700x900 մմ: Այն ծրագրավորվում է խելացի PLC կառավարման բլոկով և թվային ԼԵԴ էկրանով, կարող է սահմանել ժամաչափ, սպասարկման գրաֆիկ, ելքային ճնշում և այլն: Ներառում է սպասարկման հավաքածու՝ յուղ, ֆիլտր, միջադիրներ: 3.2. Օդի չորացուցիչը նախատեսված է սեղմված տաք օդը չորացնելու համար՝ խտացրած ջրի գոլորշիների սառեցման և հետագա ավտոմատ ջրահեռացման միջոցով: Այն կարող է 8-12 բար ճնշման տակ և 2,5-3 մ3/ժ ծավալով օդը ջրի ցողի կետում (0-4 աստիճան) չորացնելու հզորություն: Սարքը հագեցած է 600 Վտ ±10% սառնարանային կոմպրեսորով, օդափոխիչով և ջերմափոխանակիչով: 3.3. Ֆիլտրացիոն համակարգը նախատեսված է օդի աղտոտիչները հեռացնելու համար: Բաղկացած են ոչ պակաս, քան 5 փուլային օդամաքրման միավորներից, որոնք

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Органикс ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/14 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					
					հեռացնում են ջրի հետքերը, օրգանական մոլեկուլները, փոշին, մանրէները, հոտերը և այլն՝ 99.9% արդյունավետությամբ: Մաքուր օդում մնացորդային աղտոտիչների քանակը չի գերազանցում 0,001 մգ/մ3-ը կամ 0,001 ppm-ը: 3.4. Օդի բաքը նախատեսված է արտադրված և մաքրված սերմված օդը հետագա մշակման համար պահելու համար: Այն ունի 300 լիտր ծավալ, պատրաստված է պողպատից և կարող է դիմանալ մինչև 10 բար ճնշման: Հագեցած է ճնշման մանոմետրով, անվտանգության փականով, գազի մուտքի և ելքի փականներով, արտանետման ստորին փականով: Չափերը՝ 500*1500 մմ: 3.5. PSA Ազոտի գեներատորը արտադրում է ազոտ ≥50 լ/րոպե ծավալով և ≥99,999% մաքրությամբ: Ելքային ճնշումը ≥6 բար է (կարգավորելի է մինչև 8 բար): Սարքն ունի 0.8-1.0 կՎտ հզորություն և 220 Վ / 50 Հց էլեկտրաէներգիայի մատակարարում: Չափսերը՝ 750x800x1900 մմ: Ազոտի գեներատորը կառավարվում է

					թվային PLC կարգավորիչով՝ թվային LCD էկրանով: Ելքային գազի պարամետրերը կարող են կարգավորվել վերջնական օգտագործողի կողմից: Սարքը հագեցած է անվտանգության համակարգերով, ինչպիսիք են՝ ավտոմատ ճնշման արտանետման փական, արտակարգ անջատման կոճակ և այլն, ինչպես նաև մուտքի և ելքի ճնշման մանոմետրերով: Աղմուկի մակարդակը 50 դԲ-ից պակաս է: 3.6. Ազոտի բաքը նախատեսված է գեներացված 99.999% մաքրությամբ ազոտ գազը 6-8 բար ճնշման տակ պահելու համար: Այն ունի 300 լիտր ծավալ, պատրաստված է պողպատից և կարող է դիմանալ մինչև 10 բար ճնշման: Հագեցած է ճնշման մանոմետրով, անվտանգության փականով, գազի մուտքի և ելքի փականներով, արտանետման ստորին փականով: Չափսերը՝ 500*1500 մմ: 3.7. Ազոտի միջին ճնշման ուժեղացուցիչը նախատեսված է գեներացված գազային ազոտը 15-20 բար սեղմելու և բարձր ճնշման ազոտի

					բաք լցնելու և պահելու համար։ Սարքն ունի 50 լ/րոպե հզորություն։ Մուտքի ճնշումը 5-6 բար է, իսկ ելքի ճնշումը՝ 15 բար։ Սնուցման աղբյուրը՝ 220 Վ / 50 Հg, 2.5-3 կՎտ։ Սարքը կառավարվում է թվային PLC կարգավորիչով և թվային LCD էկրանով։ Այն ունի առնվազն 4 մեխանիկական ճնշման մանոմետր՝ մուտքի և ելքի ճնշման, ինչպես նաև բալոնների ներսում ճնշումը դիտարկելու համար։ Սարքը հագեցած է անվտանգության համակարգերով, ինչպիսիք են՝ ավտոմատ ճնշման արտանետման փական, արտակարգ անջատման կոճակ, նախազգուշացնող լույսային ազդանշաններ և այլն։ 3.8. Ազոտի միջին ճնշման բաքն ունի 300 լիտր ծավալ, պատրաստված է պողպատից և կարող է դիմանալ մինչև 16 բար ճնշման։ Հագեցած է ճնշման մանոմետրով, անվտանգության փականով, գազի մուտքի և ելքի փականներով, արտանետման ստորին փականով։ Չափսերը՝ 500*1500 մմ։ 3.9. Ազոտի բարձր ճնշման ուժեղացուցիչը նախատեսված է 15 բար ճնշման

					տակ սեղմված ազոտը լիցքքավորելու բարձր ճնշման ազոտի գազաբալոնների մեջ հասցնելով ելքային ճնշումը 160 բար ճնշման: Սարքն ունի 50 լ/րոպե հզորություն: Մուտքային ճնշումը 15 բար է, իսկ ելքի ճնշումը՝ 160 բար: Ճնշումը կարող է կարգավորվել վերջնական օգտագործողի կողմից: Էլեկտրամատակարարումը եռաֆազ է՝ 380 Վ / 50 Հց, 4.5-5.5 կՎտ՝ կախված աշխատանքային ծանրաբեռնվածությունից: Սարքը կառավարվում է թվային PLC կարգավորիչով՝ թվային LCD էկրանով: Այն ունի առնվազն 4 մեխանիկական ճնշման չափիչ՝ մուտքի և ելքի ճնշման, ինչպես նաև սարքի պորշիների ներսում ճնշման համար: Սարքը հագեցած է անվտանգության համակարգերով, ինչպիսիք են՝ ավտոմատ ճնշման արտանետման փական, արտակարգ անջատման կոճակ, նախազգուշացնող լույսեր և այլն: 3.10. Բարձր ճնշման լիցքավորման կոլեկտորը պատրաստված է 304 չժանգոտվող պողպատից և նախատեսված է առնվազն 5 բարձր

					ճնշման 50 լիտրանոց գազաբալոն պահելու և լցնելու համար: Այն ունի մետաղական շրջանակ՝ գլանների անվտանգ պահպանման համար: Լիցքավորման կոլեկտորը կարող է դիմանալ մինչև 200 բար ճնշման, հագեցած է 5 բարձր ճնշման մեխանիկական փականներով և միացված է բարձր ճնշման ուժեղացուցիչին ճնշմանը դիմացկուն փափուկ խողովակի միջոցով: Մուտքի և ելքի ճնշումը վերահսկվում է ճնշման մանոմետրի միջոցով և կարող է կարգավորվել կամ փակվել փականների միջոցով: 3.11. Բարձր ճնշման բալոնները ներառված են ազոտի գեներատորի հավաքածուի մեջ և կարող են հեշտությամբ միացվել և անջատվել բազմաբաշխիչին՝ առանց լրացուցիչ մեխանիկական մասերի: Բալոնները կարող են դիմանալ մինչև 200 բար ճնշման և ունեն 50 լիտր ծավալ: 4. Անվտանգության պահանջներ 4.1. Համակարգը հագեցած է անվտանգության փականներով, ավտոմատ ճնշման արտանետման համակարգով, արտակարգ անջատման կոճակով և ճնշման

					մանոմետրերով։ 4.2. Բոլոր բարձր ճնշման հանգույցները համապատասխանում են մինչև 200 բար աշխատանքային ճնշման պահանջներին։ 5. Մատակարարի պարտավորություններ 5.1. Տեղադրում պատվիրատուի կողմից համաձայնեցված հասցեում։ 5.2. Էլեկտրամոնտաժային և կոմունիկացիոն աշխատանքների իրականացում (բոլոր անհրաժեշտ նյութերով)։ 5.3. Պուսկոնալադկա և գործարկում։ 5.4. Անձնակազմի տեղում ուսուցում։ 6. Երաշխիք • Երաշխիքային ժամկետ՝ 12 ամիս։ • Երաշխիքային սպասարկում՝ 12 ամիս։